ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 115-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2009.02.18/10(676) Հոդ.182	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	05.02.2009
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	11.02.2009
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28.02.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 փետրվարի 2009 թվականի N 115-Ն

ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (10 հունիսի 2008 թվականի ՀՕ-111-Ն) 76-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել հավատարմատարների մասին կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի նոյեմբերի 15-ի «Արտոնագրային հավատարմատարների մասին կանոնադրությունը հաստատելու մասին» N 527 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2009 թ. փետրվարի 11
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 5-ի N 115-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտոնագրային և արդյունաբերական նմուշների հավատարմատարների (այսուհետ նաև՝ հավատարմատար) մասնագիտական գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հավատարմատար համարվում է այն անձը, որին արդյունաբերական սեփականության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն իրավունք է վերապահված գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների հայտերը ներկայացնելու, հայտերով նամակագրության վարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքների ձեռքբերման և տնօրինման հարցերով ֆիզիկական և իրավաբանական անձանց ներկայացնելու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

3. Որպես հավատարմատար չեն կարող որակավորվել և գրանցվել նախարարության աշխատողները, ինչպես նաև այն անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

II. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՐԱՆՑՈՒՄԸ

4. Հավատարմատարների որակավորումն ու գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած կարգով:

5. Որակավորման քննություն հանձնած թեկնածուն որպես հավատարմատար գրանցվում է իր դիմումի համաձայն, որին կցվում է օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

6. Նախարարությունը դիմումն ստանալուց հետո ընդունում է որոշում հավատարմատարին գրանցելու մասին և նրան գրանցում է արտոնագրային հավատարմատարների կամ արդյունաբերական նմուշների հավատարմատարների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում:

7. Արտոնագրային հավատարմատարը կարող է դիմել նախարարություն՝ իրեն արտոնագրային հավատարմատարների գրանցամատյանից արդյունաբերական նմուշների հավատարմատարների գրանցամատյան տեղափոխելու խնդրանքով: Արդյունաբերական նմուշների հավատարմատարը կարող է դիմել նախարարություն, որ իրեն արդյունաբերական նմուշների հավատարմատարների գրանցամատյանից տեղափոխեն արտոնագրային հավատարմատարների գրանցամատյան:

8. Նշված դիմումները բավարարվում են, եթե հավատարմատարը համապատասխանում է «Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

III. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հավատարմատարի գործունեության իրավունքը ծագում է նրա գրանցման պահից:

10. Հավատարմատարը կարող է իր գործունեությունը սահմանափակել արդյունաբերական սեփականության առանձին օբյեկտներով (գյուտեր և օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային (սպասարկման) նշաններ և ապրանքի ծագման տեղանուններ), որը հաշվի է առնվում որակավորման քննությունն անցկացնելիս:

11. Հավատարմատարն իրավունք ունի ներկայացնելու յուրաքանչյուր անձի՝ իր հետ կնքած պայմանագրի հիման վրա:

12. Հավատարմատարի իրավասությունը հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրով:

13. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող ֆիզիկական անձինք և օտարերկրյա իրավաբանական անձինք լիազորագիրը ձևակերպում են այն օտարերկրյա պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, որտեղ դա կազմվում է:

14. Հավատարմատարը պարտավոր է լիազորագիր տված անձի կողմից իրեն վստահված տեղեկատվությունը պահել գաղտնի, եթե լիազորագիր տվող անձից այլ հատուկ ցուցում չի ստացել:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**